

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՆԱԶԵԼԻ ՌՈՐԵՐՏԻ ՀԱԿՈՐՅԱՆ

**«ՆԱԽԱՆՁ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ԴՐԱ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոցենտ Գ.Վ. Եղիազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Լ. Գ. Բրուսյան

Բ.Գ.Թ., դոցենտ Հ.Զ. Ղազարյան

Առաջատար կազմակերպություն Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. մարտի 5-ին՝ ժ.15-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ –ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. հունվարի 30-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, Բ.Գ.Թ., դոցենտ՝

Ն. Մ. Սիմոնյան

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ժամանակակից լեզվաբանությունն այսօր ուսումնասիրում է ոչ միայն լեզվական առանձին երևույթներ, այլև կարևորում լեզվաբանության և հարակից այլ գիտակարգերի առնչությունների քննությունը: Այդ համատեքստում համեմատական ուսումնասիրությունների ոլորտ են ներառվում լեզվական կառույցները և իմաստային դաշտերը, ինչպես նաև այդ դաշտերում ընդգրկված միավորների թարգմանության և համարժեքության հիմնախնդիրները: Նման ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում բացահայտելու տարբեր լեզվակիրների ազգային ու աշխարհընկալման նրբերանգները և վեր հանելու նրանց մշակութային ինքնության նմանություններն ու տարբերությունները: Չափազանց հետաքրքիր են համընդհանուր, սակայն իմաստային որոշակի նրբերանգներով տարբերվող զգացումներն ու զգացողություններն արտահայտող բառույթների համեմատական ուսումնասիրությունները: Այս խնդիրների ոչ բավարար ուսումնասիրությամբ է պայմանավորված սույն ատենախոսական աշխատանքի **արդիականությունը**: Այս կամ այն զգացողության լեզվականացման առանձնահատկությունները պարզաբանելու համար կարևորվում են ոչ միայն դրա բառարանային սահմանումները, այլև գեղարվեստական գրականությունից քաղված օրինակների վերլուծությունը: Առավել հետաքրքրական է, երբ գեղարվեստական երկում առկա հասկացությունների իմաստային առնչությունները համեմատվում են այդ երկերի թարգմանություններում առկա միևնույն հասկացությունների հետ:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: «Նախանձ» իմաստային դաշտի լեզվամշակութային առանձնահատկությունների դիտարկումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ նպաստելով զուգադրվող լեզուների ազգային, մշակութային, պատմական, հասարակական կարևորություն ունեցող արժեքների բացահայտմանը: «Նախանձ» իմաստային դաշտը չի ուսումնասիրվել հայերենում, ավելին, զուգադրական քննության չի ենթարկվել հայերենում և անգլերենում: Այս փաստով էլ պայմանավորված է ատենախոսության **նորույթը**: Հետազոտության մեջ ոչ միայն առաջին անգամ քննության են ենթարկվել «*նախանձ*» և «*envy*» իմաստային դաշտերը, այլև այդ դաշտերն ուսումնասիրվել են թարգմանական համարժեքության տեսանկյունից՝ գեղարվեստական տեքստերում: Ուսումնասիրելով «*նախանձ*» հասկացության իմաստային առանձնահատկությունները՝ վեր են հանվել նաև տարբեր դարաշրջաններում և մշակույթներում ստեղծագործող հեղինակների աշխարհընկալման տարբերությունները՝ խնդրո առարկա՝ «*նախանձ*» զգացումի ներկայացման համատեքստում: Վերլուծելով «*նախանձ*» և «*envy*» իմաստային դաշտերը հայերենում և անգլերենում՝ փորձ է արվում անգլերեն գեղարվեստական ստեղծագործություններում և հայերեն համապատասխան թարգմանություններում գտնել դրանց լեզվական, ոճական ու գործաբանական առանձնահատկությունները՝ լեզվամշակութային գործոնների հաշվառմամբ:

ԱՏԵՆԱԽՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Սույն աշխատանքի *նպատակն* է *նախանձ/envy* իմաստն արտահայտող լեզվական միավորների զուգադրության միջոցով վեր հանել նշված իմաստային դաշտերի ընդհանրական և տարբերակիչ իմաստային հատկանիշները, պարզել, թե ինչպես են «*նախանձ*» իմաստային դաշտի միավորներն արտացոլում գեղարվեստական տեքստերում և ներկայացնել դրանց թարգմանությունների համարժեքության աստիճանը: Այս նպատակի իրականացման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները*.

- ստուգաբանական վերլուծության ենթարկել «*նախանձ*» և «*envy*» արմատները,
- վերլուծել «*նախանձ*» և «*envy*» իմաստն արտահայտող գոյականների, բայերի, ածականների բառիմաստային խմբերը և զուգորդային դաշտերը,
- վեր հանել հայերենում և անգլերենում նշված միավորների իմաստների ընդհանուր և տարբերակիչ իմակները՝ զուգադրելով «*նախանձ*» և «*envy*» իմաստային դաշտը մասնավորեցնող բոլոր բառիմաստային ենթախմբերը,
- ուսումնասիրել «*նախանձ*» և «*envy*» իմաստային դաշտերի առկայացումը անգլերեն գեղարվեստական ստեղծագործություններում և ընտրված օրինակները համեմատել հայերեն թարգմանությունների հետ,
- վեր հանել աղբյուր և թիրախ տեքստերում «*նախանձ*» և «*envy*» իմաստային դաշտերի միավորների և համատեքստային շերտերի համարժեքության աստիճանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ: Ուսումնասիրության փաստական *նյութ* են ծառայել տարբեր լեզվական միավորներ՝ գոյականներ, բայեր, ածականներ, դարձվածային միավորներ, որոնք ուղիղ կամ փոխաբերական իմաստով վերաբերում են «*նախանձ*» իմաստային դաշտին: Ուսումնասիրվող միավորները դուրս են գրվել հայերեն և անգլերեն բացատրական, արմատական, հոմանիշների, դարձվածային և ասացվածքների բառարաններից: Հայերեն միավորները լուսաբանվել են *Արևելահայերենի ազգային կորպուսի* (<http://www.eanc.net>), իսկ անգլերեն միավորները՝ *Բրիտանական ազգային կորպուսի* (<http://www.natcorp.ox.ac.uk>) ընձեռած տվյալների հիման վրա: Որպես լեզվանյութ ծառայել են նաև անգլերեն գեղարվեստական երկերից քաղված «*նախանձ*» իմաստն արտահայտող տեքստային օրինակները և դրանց հայերեն թարգմանությունները:

Աշխատանքում կիրառվել են ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված վերլուծության՝ *բառարանային համալսարած ընկրանքի, բառիմաստի բաղադրական վերլուծության, զուգադրական-փոխաբանական, քանակական հաշվումների մեթոդները*: Վերլուծության են ենթարկվել նաև թարգմանական փոխակերպումները՝ ըստ համարժեքության աստիճանի:

ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Որպես աշխատանքի *տեսական-մեթոդական հիմք* օգտագործվել են Ի.Ստերնինի, Զ.Պոպովայի (իմաստային դաշտ), Վ.Կոմիսարովի, Զ.Քեթֆորդի, Ա.Նազարյանի (թարգմանաբանություն) և մի շարք այլ լեզվաբանների ներկայացրած դրոյթները:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ:

Ատենախոսության տեսական արժեքը պայմանավորված է «նախանձ» և «envy» իմաստային դաշտերի համակարգային զուգադրական վերլուծության կարևորությամբ՝ տիպաբանական լեզվաբանության, լեզվամշակութաբանության և թարգմանաբանության հայեցակետերից: Այն կարող է տեսական հիմք ծառայել նմանատիպ այլ ուսումնասիրությունների համար: Աշխատանքն ունի նաև գործնական որոշակի արժեք. կատարված վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել հայերենի և անգլերենի համեմատական և զուգադրական ուսումնասիրության, բառագիտության և թարգմանաբանության դասընթացների, ինչպես նաև «Հոգելեզվաբանություն», «Միջմշակութային հաղորդակցություն», «Լեզվամշակութաբանություն» առարկաների շրջանակներում իրականացվող գործնական պարապմունքների ժամանակ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (իրենց ենթագլուխներով), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (գիտական, գեղարվեստական, համացանցային կայքէջեր) և հավելվածներից: Ատենախոսության ծավալը 152 էջ է:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության առաջին՝ «*Իմաստային դաշտ*» հասկացությունը թարգմանական համարժեքության հարացույցում», գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում («**Բառային համակարգը՝ որպես լեզվի կառուցվածքի մաս և իմաստային դաշտի տեսության զարգացումները**») ներկայացվում են *իմաստային դաշտին* վերաբերող արևմտյան, ռուս և հայ լեզվաբանների տեսական դրույթները:

Լեզվաբանական հանրագիտարանային բառարանը «**իմաստային դաշտը**» բնորոշում է որպես «հարացույցային կապ ունեցող բառերի կամ դրանց առանձին նշանակությունների շարք, որն իր կազմում ունի ընդհանուր իմաստային հատկանիշ և տարբերվում է առնվազն մեկ տարբերակիչ հատկանիշով»¹:

Ուսումնասիրելով *իմաստային դաշտ* հասկացությանը նվիրված աշխատությունները, մասնավորապես Յո.Տրիբի, Գ.Իփսենի, Վ.Վարտբուրգի, Վ.Պորցիգի, Ռ.Մեյերի, Լ.Վասիլևի, Ե.Դիբբովայի, Ռ.Գայսինայի, Ի.Չումակ-ժունի, Զ.Պոպովայի, Ի.Ստերնինի, Ի.Սալոմատինայի դրույթները՝ որպես ատենախոսության տեսական հիմք ենք ընդունել Ի.Ստերնինի տեսակետը, որն առանձնացնում է *իմաստային դաշտի* հետևյալ **հատկանիշները**՝ դաշտը համակարգային հարաբերություններով փոխադարձաբար կապված միավորների ամբողջություն է, որի միավորներն ունեն իմաստային ընդհանրություն, դաշտի մեջ առանձնացվում են **միջուկային** ու **եզրային**

¹ Ст'я Лингвистический энциклопедический словарь. Языкознание, Гл.ред. В. Н. Ярцева-2-е изд. Я41; Большая Российская энциклопедия, Изд-во Советская Энциклопедия, Москва, 1998, էջ 380:

բաղադրիչները, *միջուկային* բաղադրիչներն առավել հստակ են իրականացնում դաշտի գործառույթը. գործածության ավելի բարձր հաճախականություն և հիմնականում հարանշանակորեն չեզոք պարզ կառուցվածք ունեցող բառեր են, իսկ *եզրային* բաղադրիչներն ունեն ավելի բարդ կառուցվածք, բարբառային, հնացած կամ ոչ այնքան հաճախ կիրառվող և հարանշանակային իմաստներ պարունակող բառեր են (այստեղ ընդգրկվում են նաև դարձվածային միավորները)²:

Ուսումնասիրելով *բառիմաստային խմբի* վերաբերյալ տարբեր լեզվաբանների (Օ. Ախմանովա, Վ. Գակ, Ֆ. Ֆիլին և այլք) սահմանումները՝ համակարծիք ենք Գ. Ստեպանովայի կողմից առաջարկած բնորոշմանը, ըստ որի՝ «բառիմաստային խումբը նույն խոսքի մասին պատկանող իմաստային ընդհանրություն ունեցող բառերի խմբավորումն է»³:

Երկրորդ ենթագլուխը («Թարգմանության համարժեքությունը և թարգմանական փոխակերպումները») նվիրված է թարգմանության համարժեքության և թարգմանական փոխակերպումների մասին տարբեր տեսաբանների կողմից առաջ քաշված դասակարգումներին (Յա. Ռեցկեր, Օ. Կադե, Ա. Շվեյցեր, Ռ. Մինյար-Բելլորուչև, Ա. Նազարյան, Պ. Նյումարկ, Զ. Քեթֆորդ, Վ. Կոլլեր, Վ. Գակ, Յու. Լվին, Յու. Նայդա, Լ. Բարխուդարով, Վ. Վինգրադով):

Տարբեր լեզուներում իմաստային դաշտերը ներկայանում են ոչ միայն լեզվական միավորների ընդհանրությամբ, այլև տարբերություններով, որոնք առավել ներկայանալի են գեղարվեստական թարգմանության մեջ:

Առենախոսության երկրորդ՝ «Նախանձ» և «Envy» իմաստային դաշտերի զուգադրական վերլուծությունը հայերենում և անգլերենում», գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլուխը («Նախանձ» և «Envy» արմատների իմաստային և ստորագրանական վերլուծությունը հայերենում և անգլերենում») ներկայացնում է «նախանձ» և «envy» իմաստային դաշտերում ընդգրկված բառիմաստային խմբերի (գոյական, բայ, ածական) համեմատական վերլուծությունը հայերենում և անգլերենում: Տարբեր աղբյուրներից դուրս է գրվել «նախանձ/envy» իմաստային դաշտերը կազմող հայերեն 182 և անգլերեն 170 լեզվական միավոր: Փորձել ենք ուրվագծել նշված իմաստային դաշտերի *միջուկը, մոտակա և հեռավոր եզրերը*: Մինչ «նախանձ» և «envy» իմաստային դաշտերին անդրադառնալը ներկայացրել ենք *բառիմաստային խմբերի* միջուկային անդամների ծագումնաբանությունը, քանի որ, կարծում ենք, կարևոր է ուսումնասիրել այս բառերի արմատները, պարզել իմաստային զարգացման միտումները, գտնել իմաստային ընդհանրությունները:

² Ст'я Стернин И.А., Лексическое значение слова в речи, Изд-во Воронежского ун-та, Воронеж, 1985, էջ 29-31:

³ Ст'я Степанова Г.В., Шрамм А.Н., Введение в семасиологию, Учеб. Пособие, КГУ., Калининград, էջ 72:

Հայերենում **նախանձ**⁴ և **խանդ**⁵ բառերն ունեցել են *իմաստային* ընդհանրություններ, ավելին, **նախանձ** բառն առաջացել է **նա** և **խանդ(ձ)** բառերի համադրությամբ, իսկ անգլերենում **envy**⁶ և **jealousy**⁷ բառերը ունեցել են տարբեր իմաստներ. **envy** բառն ունեցել է *նախանձ* բացասական իմաստը, իսկ **jealousy** բառը ունեցել է *խանդավառություն* դրական իմաստը: Սակայն ժամանակակից անգլերենի բացատրական և հոմանիշների բառարաններում այս բառերը համարվում են հոմանիշներ և կարող են որոշ համատեքստերում փոխարինել միմյանց:

Հայերենում «**նախանձ**» իմաստային դաշտի *միջուկային բաղադրիչներն* են **նախանձ** գոյականը, **նախանձել** բայը, **նախանձ (նախանձոտ)** ածականը, անգլերենում «**envy**» իմաստային դաշտի *միջուկային բաղադրիչներն* են **envy** գոյականը, **to envy** բայը և **envious** ածականը:

Հիմք ընդունելով **նախանձ** և **envy** բառերի իմաստային սահմանումները՝ «**նախանձ**» իմաստային դաշտի կենտրոնում ներկայանում է հետևյալ *սեռային իմակը՝ ուրիշի առավելությունները փեսնելիս չարության, նաև բարի նախանձի զգացում*, իսկ անգլերենում՝ *ուրիշի առավելության գիտակցման հեղևանքով առաջացած չարության զգացում և միաժամանակ այդ առավելությունները ունենալու ցանկություն* սեռային իմակը:

Ուսումնասիրելով հայերեն «**նախանձ**» և անգլերեն «**envy**» իմաստային դաշտերի *կենտրոնական եզրերի փարբերակիչ իմակները՝* կարելի է փաստել, որ վերջիններս նույնական են, այն է՝ *չարության, նախանձի զգացում ուրիշի առավելությունները փեսնելիս*:

⁴ **Նախանձ** բառը հայերենում ներկայացված է որպես «*նախանձ, չարանալը*»՝ նախանձող մարդը *նախ* իր *անձն* է վնասում և ապա մյուսներին, այսինքն՝ «*նախանձ*» բառը կազմված է *նախ* և *անձն* բառերից, ինչպես նաև՝ *նախանձ* բառն առաջացել է *նա* և *խանդ(ձ)* բառերի համադրությամբ: Տե՛ս Աճառեան Հ.Հ., Հայերէն արմատական բառարան, ԵՊՀ հրտ., Երևան, 1926, էջ 420-421, Ջահուկյան Գ.Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրտ., Երևան, 2010, էջ 560:

⁵ **խանդ** բառն ունի «*սրտի ուժգին բերմունք սիրով, զուրթով, նախանձով և ուրիշ կիրքով*» նշանակությունը, բնիկ հայկական է, ծագել է հնդեվրոպական նախալեզվի *khod* կամ *qrd* արմատից, որի հիմնական նշանակությունն է «*վառել, բորբոքել, փայլիլ*»: Տե՛ս նույն *փեղում*, էջ 328-329, էջ 315-316., Martirosyan H. K, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon. Brill, 2009, p.326:

⁶ **Envy** (*նախանձ*) գոյականն անգլերենը փոխառել է լատիներեն «*invidia*» բառից (*in* «մեջ» նախածանցից և *vidēre* «տեսնել» արմատից), որն ունեցել է *envy, grudge, jealousy, ill will, rivalry* (*նախանձ, խանդ, չարակամություն, մրցակցություն*) նշանակությունները: Միջին անգլերենում այն ստացել է *envie* ձևը, որը եկել է հին ֆրանսերենից: Տե՛ս Online Etymological Dictionary (<http://www.etymonline.com>)

⁷ **Jealousy** (*խանդ*) բառը հին ֆրանսերենը փոխառել է լատիներենի *gelos* արմատից: Հին ֆրանսերենի *gelousie* կամ *jalousie* բառերի արմատները նշանակել են «*enthusiasm, zeal, love, longing, jealousy*»՝ «*խանդավառություն, սեր, բռուն ցանկություն, խանդ*» (ժամանակակից ֆրանսերենում՝ *jaloux*): Հին ֆրանսերենից այն անցել է միջին անգլերեն *gelusie* կամ *jelosie* տարբերակով, որից էլ ներկայիս *jealousy* բառն է: Տե՛ս նույն *փեղում*:

Իմաստային դաշտերի մոտակա եզրերում առկա են Ա՝ ընդհանրական (նախանձոտ ցանկություն՝ ունենալու ուրիշի առավելություններից, խանդ և այլն) և տարբեր իմաստային բաղադրիչ պարունակող միավորների խմբեր: Անգլերեն «envy» իմաստային դաշտում առկա է **նախանձոտ ցանկություն՝ ունենալու ուրիշի առավելություններից, վրեժխնդրության, արելության, թշնամության զգացում ունենալու** տարբերակիչ իմաստային բաղադրիչ պարունակող միավորների խմբերը: Հայերենի իմաստային դաշտի մոտակա եզրը նման իմաստային բաղադրիչ պարունակող խումբ չունի: Հայերենում տվյալ եզրում տարանջատված են **նախանձը որպես հարկանիշ, նախանձը որպես վարքագիծ**, ինչպես նաև **սպորանախանձ, գեղանախանձ** իմաստային բաղադրիչ պարունակող միավորների իմակները, որոնք բացակայում են անգլերենում:

Հայերեն «**նախանձ**» և անգլերեն «**envy**» իմաստային դաշտերի *հեռավոր եզրերի* տարբերակիչ իմաստային բաղադրիչ պարունակող միավորների խմբերը ներկայացնում են ոչ միայն ընդհանրություններ, այլև տարբերություններ: Մասնավորապես, հայերենի «**նախանձ**» իմաստային դաշտի *հեռավոր եզրն* ընդգրկել է **մեծ եռանդով, կրքով մի բանին հեղամուտ լինելու** տարբերակիչ իմաստային բաղադրիչ պարունակող միավորների խումբը, այսպես կոչված *բարի նախանձը*: Անգլերենում առկա է **ազահություն** տարբերակիչ իմակը, որը բացակայում է հայերենում:

Այսպիսով, *հեռավոր* եզրի տվյալների համաձայն՝ անգլերենի լեզվակրի համար *նախանձը* զուգորդվում է առավելապես չարամիտ մտադրությունների հետ, իսկ հայերենի լեզվակրի համար միայն դրական հարանշանակություն ունի:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը («Նախանձ» և «Envy» իմաստն արտահայտող դարձվածային միավորների զուգորդային դաշտերը հայերենում և անգլերենում) ներկայացնում է «*նախանձ*» և «*envy*» իմաստն արտահայտող դարձվածային միավորների զուգորդային դաշտերը հայերենում և անգլերենում: «*Նախանձ*» իմաստն արտահայտող հայերեն և անգլերեն դարձվածային միավորների⁸ զուգորդային դաշտերի վերլուծությունը փաստում է, որ զուգադրվող լեզվամշակույթներում առկա են ոչ միայն տարբերություններ, այլ նաև ընդհանրություններ:

«*Նախանձ*» իմաստն առկայացնող հայերեն 45 և անգլերեն 56 դարձվածքները և ասացվածքները⁹ դասակարգել ենք ըստ զուգորդային դաշտերի՝ ելնելով **նախանձ** զգացումի հատկանիշներից, այն է՝ **նախանձ-**

⁸ Ըստ իմաստային դաշտերի վերաբերյալ տեսական ըմբռումների՝ դարձվածային միավորներն անհրաժեշտ է ընդգրկել իմաստային դաշտի *եզրային* գոտում, քանի որ վերջիններս ոճաբանորեն նշույթավորված են և հաճախադեպ չեն: Տե՛ս Ножин Е. А., Англо-русский словарь по семантическим группам.// Иностранные языки. Сборник статей. №2. ВИИЯ. - Москва, 1966, էջ 117:

⁹ Դարձվածքները և ասացվածքները ընդգրկել ենք «դարձվածային միավոր» եզրույթի ներքո: Տե՛ս Եղիազարյան Գ.Վ., Մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածքները հայերենում և անգլերենում, «Արեգ» հրտ, Երևան, 2007, էջ 11:

չարականություն, նախանձ-վրեժխնդրություն, նախանձ-ցավ, նախանձ-ցանկություն, նախանձ-շողոքորթություն:

1. Նախանձ- չարականություն:

Թե՛ հայերենում և թե՛ անգլերենում այս խմբում ընդգրկված բոլոր դարձվածքներում առկա է **աչք/eye** բաղադրիչը՝ *հայերենում՝ աչքը չվերցնել՝ մեկին չհանդուրժել, նախանձել, մեկի հաջողությունը չտանել, անգլերենում՝ to beware of an evil eye – հեռո՛ւ մնա՛՝ զգուշացի՛ր չար աչքից:*

2. Նախանձ- ցավ:

Թե՛ հայերենում և թե՛ անգլերենում այս զուգորդային դաշտը ձևավորող միավորներն առանձնանում են այն հատկանիշով, որ *նախանձը ցավ է պատճառում* հենց իրեն՝ նախանձողին: Հայերենում այս խմբում ընդգրկված որոշ դարձվածային միավորներում **աչք** բաղադրիչից բացի առկա են **փոր** և **սիրտ** բաղադրիչները՝ **աչքը ծակել՝ նախանձ առաջացնել, չհանդուրժել, չտանել, տրտման, սիրտը տրաքել՝ նախանձել ուրիշին, փորը պատռվել՝ սաստիկ նախանձել, անգլերենում՝ to be squint-eyed with envy-կուրանալ/շլանալ նախանձից:**

3. Նախանձ- վրեժխնդրություն:

Թե՛ հայերենում և թե՛ անգլերենում այս զուգորդային դաշտում տեղ են գտել այն դարձվածային միավորները, որոնք ունեն **վրեժխնդրության, ռիսի** իմաստ, սակայն հարկ է նշել, որ տվյալ միավորներում **նախանձի** իմաստը համատեքստային է՝ *հայերենում՝ օժություն անել՝ նենգություն, չարականություն, խարդախություն անել, նախանձել, անգլերենում՝ to put smb's pipe out – խանգարել հաջողությանը:*

4. Նախանձ-ցանկություն:

Թե՛ հայերենում և թե՛ անգլերենում այս զուգորդային դաշտը ձևավորող դարձվածքները և ասացվածքները արտահայտում են **ցանկության** իմաստը, որը երբեմն առաջանում է, երբ անձը, տեսնելով ուրիշի հաջողությունները, նախանձով է լցվում և ցանկանում հասնել այդ նույն նվաճումներին՝ *հայերենում՝ Հարևանի հարսը սիրուն է, անգլերենում՝ The girl looks fine, but she isn't mine. – հմմտ. Լավն է, ափսոս իմը չէ:*

5. Նախանձ- շողոքորթություն:

Հետաքրքրական է, որ միայն անգլերենում է առկա **նախանձ-շողոքորթություն** զուգորդային դաշտը ձևավորող խումբը, օրինակ՝ **Envy is the sincerest form of flattery.**-(բառացի՝ *Նախանձը ամենաանկեղծ շողոքորթությունն է):*

Դարձվածային միավորների զուգադրությունը հնարավորություն է ընձեռում գաղափար կազմել լեզվակիրների մշակութային արժեքների և լեզվանտաճողության ընդհանրությունների և տարբերությունների մասին:

Ատենախոսության երրորդ գլուխը («*Envy*» *իմաստային դաշտի առկայացումը անգլերեն գեղարվեստական արձակում և դաշտի միավորների համարժեքությունը հայերեն թարգմանություններում*») ներկայացնում է անգլերեն գեղարվեստական երկերից քաղված տեքստային հատվածներում «*նախանձ*» իմաստն արտահայտող օրինակների և դրանց հայերեն թարգմանությունների համեմատական վերլուծությունը:

Զուգադրվող լեզուների լեզվական միավորների անհամապատասխանությունը, ինչպես նաև աշխարհընկալման տարբերությունները կարող են հանգեցնել բնագիր տեքստի և թարգմանության անհամարժեքությանը: Հետևաբար, շատ կարևոր է պահպանել թարգմանության համարժեքությունը՝ **քերականական, իմաստային, ոճական**, ինչպես նաև **գործաբանական** մակարդակներում:

Որպես ուսումնասիրության նյութ՝ ընտրել ենք 19-րդ դարի անգլիացի գրող Ու. Թեքերեյի «Ունայնության տոնավաճառ» (*Thackeray W. «Vanity fair»*), 20-րդ դարի ամերիկացի գրող Զ.Լոնդոնի «Մեծ տան փոքրիկ տիրուհին» (*London J. «The Little Lady of the Big House»*) և 20-րդ դարի անգլիացի գրող Դ.Լորենսի «Լեդի Չաթլրլիի սիրեկանը» (*Lawrence D. H. «Lady Chatterley's Lover»*) վեպերը, որոնք, ըստ մեզ, լավագույնս են առկայացնում **նախանձի** ընկալման առանձնահատկությունները, քանի որ նշված վեպերի հերոսները, կյանքի փնտրտուքների մեջ բախվելով բազմաթիվ խոչընդոտների, վերապրում են տարբեր զգացողություններ, այդ թվում նաև **նախանձի** զգացում: Նշված գեղարվեստական վեպերի ընտրությունը, վերլուծությունը և համեմատությունը պայմանավորված է նաև նրանով, որ նպատակ ենք ունեցել պարզելու, թե ինչ տարբերակիչ իմաստային բաղադրիչներ է ստացել **նախանձ** իմաստը տարբեր դարաշրջաններում, տարբեր մշակույթներում, և որոնք են ընդհանրություններն ու տարբերությունները: Հայերեն թարգմանության համարժեքությունը վերհանելու նպատակով վերլուծել ենք նշված ստեղծագործությունների թարգմանությունները՝ Ս.Ալեմյանի («Ունայնության տոնավաճառ»), Կ.Սիմոնյանի («Մեծ տան փոքրիկ տիրուհին») և Ա.Արսենյանի («Լեդի Չաթլրլիի սիրեկանը»):

Քանի որ «**նախանձ**» իմաստային դաշտում ընդգրկված թե՛ *կենտրոնական*, թե՛ *մոտակա* և թե՛ *հեռավոր* եզրերի (հայերենում՝ *նախանձ*, *խանդ*, *արեւոյություն*, *ոխ*, *նախանձախնդրություն* ևն, անգլերենում՝ *envy*, *jealousy*, *malice*, *grudge*, *resentment* ևն) բառային միավորները այդքան էլ հաճախադեպ չեն գեղարվեստական տեքստի հյուսվածքում, մեր աշխատանքում, որպես վերլուծության ևս մեկ բաղադրատարր, ընդգրկել ենք նաև այս հասկացությունն առկայացնող *համարեքստային* շերտը:

Անգլերենի «*envy*» (*նախանձ*) իմաստային դաշտը հայերեն թարգմանությունում առկայացել է հիմնականում *կենտրոնական* և *մոտակա* եզրերի անդամների միջոցով (անգլերենում՝ ***jealousy***, ***malice***, ***spite***, ***hate***, ***grudge*** ևն, հայերենում՝ ***խանդ***, ***նախանձ***, ***ոխ*** ևն), որոնք պատկանում են **նախանձ** և **envy** բառերի հոմանշային շարքերին: Սակայն երբեմն «**envy**» իմաստային դաշտի անդամները փոխանցվել են թարգմանություն հայերենի իմաստային

դաշտի *հեռավոր* եզրի անդամների միջոցով:

Երկու լեզուների լեզվական միավորների անհամապատասխանությունը, ինչպես նաև աշխարհընկալման տարբերությունները որոշ դեպքերում հանգեցրել են բնագիր տեքստի և թարգմանության անհամարժեքությանը, հետևաբար, կիրառվել են մի շարք թարգմանական փոխակերպումներ (*հավելում, զեղչում, փոխհարուցում, հարմարեցում, պարզեցում, խոսքիմասային փոխակերպում*) և տարբեր տեսակի թարգմանություններ (*համարժեք, նկարագրական, հականշային*):

Վերոնշյալ վեպերից դուրս գրված օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ «**նախանձ**» իմաստային դաշտի միավորները բաժանվել են հետևյալ տարբերակիչ իմաստային խմբերի՝ **չարականություն, ատելություն, զայրույթ, թշնամություն (մրցակցություն), խանդ, վրեժխնդրություն, ցանկություն**:

1. **Չարականություն** տարբերակիչ բաղադրիչով խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի «*envy*» իմաստային դաշտի *մոտակա եզրի* միավորները, օրինակ՝ **grudge, envy** բառերը և հայերեն նշված միավորները թարգմանվել են **չարականություն, չարություն, նախանձ, նախանձել** բառերով, որոնք ընդգրկված են հայերենի «*նախանձ*» իմաստային դաշտի *մոտակա եզրում*:

Օրինակ՝

«*This is blessed news, m'am - indeed, m'am,*» the housekeeper said; how happy he will be! **But some folks in May Fair, m'am, will owe him a grudge, m'am** (W. Thackeray «*Vanity Fair*», p. 372).

- Լավ եղավ, մե՛մ,- ասաց սպասուհին: Էստեղ իրեն շար լավ կզգա: **Բայց Մեյֆեյրում, մե՛մ, շարերը նրան կնախանձեն:**(Վ.Թեքերեյ, Ունայնության փոնավաճառ, թարգմ.՝ Ս. Ալեմյան, էջ 524):

Անգլերենի **to owe smb a grudge** դարձվածքն ունի **ատամ ունենալ մեկի վրա** իմաստը¹⁰ և նշված դարձվածքի հայերեն *զուգահեռ դարձվածային համարժեքն* է: Սակայն թարգմանիչը գերադասել է կիրառել *ազատ (փոփոխուն) բառի* հնարը և թարգմանել է **կնախանձեն** բայով, որը տվյալ հատվածում իմաստային առումով ճիշտ է:

2. **Ատելություն** տարբերակիչ բաղադրիչով խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի «*envy*» իմաստային դաշտի *մոտակա եզրի* միավորները, օրինակ՝ **hate, hatred**: Սակայն հայերենում տվյալ միավորները թարգմանվել են **ատելություն** բառով, որը հայերենի «*նախանձ*» իմաստային դաշտում ընդգրկված չէ:

Օրինակ՝

Mrs. Frederick Bullock, I say, flung glances of the bitterest hatred at the little upstart as he rode by with his hand on his side and his hat on one ear, as proud as a lord (W. Thackeray «*Vanity Fair*», p. 420).

¹⁰ Տե՛ս Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան ԵՊՀ հրտ., Երևան, 1975, էջ 82:

Միսիս Ֆրեդերիկ Բալլոկը, որն ապելությամբ էր նայում փոքրիկ դուրսապրծուկին, մինչ վերջինս ձիավարում էր, մի ձեռքը՝ կոնքին, գլխարկը՝ թեք, մի խոսքով՝ իսկական լորդի նման (Վ. Թեքերեյ, Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ս. Ալեմյան, էջ 583):

Այստեղ թարգմանիչը **flung glances** հատվածը թարգմանել է **նայում էր բայով՝** կիրառելով **քերականական փոխակերպում**, մասնավորապես **խոսքիմասային փոխակերպում**, մինչդեռ կարելի էր թարգմանել **հայացք էր նետում համարժեքով: Bitterest hatred** բառակապակցությունը թարգմանվել է **ատելություն** գոյականով՝ չպահպանելով ելակետային տեքստի գործաբանական և ոճական արժեքը: Թարգմանիչը օգտագործել է **զեղչման** հնարը:

3. Հայրույթ տարբերակիչ բաղադրիչներով խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի «**envy**» իմաստային դաշտի **մուտակա եզրի** միավորները, օրինակ՝ **indignation, indignant, resentment, bitterness** բառերը և հայերեն տվյալ միավորները թարգմանվել են **զայրույթ, վրդովմունք** բառերով, որոնք ընդգրկված չեն հայերենի «**նախանձ**» իմաստային դաշտում:

Օրինակ՝

*And she fell to thinking of her Russell Square friends with that very same philosophical **bitterness** with which, in a certain apologue, **the fox is represented as speaking of the grapes.*** (W. Thackeray «Vanity Fair», p. 46).

Եվ նա այժմ մտածում էր Ռասսել-սկվերի իր բարեկամների վերաբերյալ նույնպիսի փիլիսոփայական **դառնությամբ**, ինչպես առակի մեջ **աղվեսն է ներկայացված՝ խաղողի մասին խոսելիս** (Վ. Թեքերեյ, Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ս. Ալեմյան, էջ 72):

Թարգմանիչն այս օրինակում **bitterness** բառը, որը անգլերենի «**envy**» իմաստային դաշտում ընդգրկված միավոր է, թարգմանել է **դառնություն** համարժեքով, սակայն վերջինս հայերենի «**նախանձ**» իմաստային դաշտի միավոր չի համարվում: Տվյալ հատվածում հանդիպում ենք **the fox is represented as speaking of the grapes** հատվածի **ինչպես առակի մեջ աղվեսն է ներկայացված՝ խաղողի մասին խոսելիս** թարգմանությունը: Հարկ է նշել, որ թե՛ անգլերենում, թե՛ հայերենում առկա է «**Աղվեսի և խաղողի**» առակը՝ վերցված Եզոպոսի առակներից, որը հիմք է ծառայել միջազգային դարձվածք-ասույթի առաջացման համար (*The fox couldn't reach the grapes he says «Those grapes are sour!»*, *Աղվեսը չի կարողանում հասնել խաղողին և ասում է. «խաղողը խակ է»*): Հետևաբար, տվյալ ասացվածքը թարգմանելիս թարգմանիչը կիրառել է **միջլեզվական զուգահեռ համարժեքը**:

4.Թշնամություն (մրցակցություն) տարբերակիչ բաղադրիչներով խմբում ընդգրկվել են անգլերենի «**envy**» իմաստային դաշտի **մուտակա** և միևնույն ժամանակ **հեռավոր եզրի rival, rivalry** միավորները, որոնք թարգմանվել են համապատասխանաբար **մրցակից, մրցակցություն** բառերով: Նշենք, որ հայերենի «**նախանձ**» իմաստային դաշտը չունի այս տարբերակիչ իմաստային

խումբը: Հետաքրքրական է, որ նշված իմաստային խումբն առկայացել է միայն **Ու.Թեքերեյի «Ունայնության տոնավաճառ»** վեպում: Այդ փաստը կարելի է կապել այն հանգամանքի հետ, որ 19-րդ դարում անգլիական իրականությունը չի փայլել խաղաղությամբ. *թշնամությունը* ծնել է նաև *նախանձ*:

Օրինակ՝

A generous rivalry, no doubt, as to which should be most attentive to the dear sufferer in the state bedroom. (W. Thackeray «Vanity Fair», p. 95).

Անկասկած, դա **վեհանձն մրցակցություն էր**, թե իրենցից ով է ավելի ուշադիր լինելու գլխավոր ննջասենյակում պատկած սիրելի փառապալին: (Վ. Թեքերեյ, *Ունայնության տոնավաճառ*, թարգմ.՝ Ս. Ալեմյան, էջ 144):

Անգլերեն **a generous rivalry** օբյեկտորոն ոճական հնարը հայերեն թարգմանվել է **վեհանձն մրցակցություն** համարժեքով: Թարգմանչին հաջողվել է պահպանել ելակետային տեքստի գործաբանական արժեքը:

5. Խանդ տարբերակիչ բաղադրիչով խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի «**envy**» իմաստային դաշտի *մոտակա եզրի jealousy, to be jealous* միավորները, որոնք հայերեն թարգմանվել են *նախանձ/ել* և *խանդ/ել* բառերով: Վերջիններս ընդգրկված են հայերենի «*նախանձ*» իմաստային դաշտի *մոտակա եզրում*: Հարկ է նշել, որ **Ջ. Լոնդոնի «Մեծ տան փոքրիկ տիրուհին»** վեպում հանդիպում են տվյալ իմաստային բաղադրիչը պարունակող միայն համատեքստային օրինակներ:

Ինչպես նշել ենք, հայերենի **նախանձ** և **խանդ**, անգլերենի **envy** և **jealousy** գոյականներն ունեն իմաստային ընդհանրություններ և որոշ համատեքստերում համարվում են հոմանիշներ, և թարգմանիչը դրանք *համարժեքորեն* թարգմանել է հայերեն **նախանձ** բառի միջոցով:

Օրինակ՝

«I think Miss is very clever», with the most killing sarcastic air. In fact, Mrs. Firkin had that natural jealousy which is one of the main principles of every honest woman (W. Thackeray «Vanity Fair», p. 75).

– Կարծում եմ, որ օրհորդը շատ խելացի է:

Իրապես, **միսիս Ֆերկինը զերծ չէր բնական այն նախանձից**, որը յուրաքանչյուր ազնիվ կնոջ հիմնական նախապարրերից մեկն է (Վ. Թեքերեյ, *Ունայնության տոնավաճառ*, թարգմ.՝ Ս. Ալեմյան, էջ 114):

Այս օրինակում **նախանձ** գոյականը հանդես է եկել **խանդ** իմաստով: Թարգմանիչը **natural jealousy** բառակապակցությունը թարգմանել է **բնական նախանձ** բառակապակցությամբ, որը տվյալ համատեքստում միանգամայն ընդունելի է: Իսկ **Mrs. Firkin had that natural jealousy** հատվածը վերարտադրվել է՝ **միսիս Ֆերկինը զերծ չէր բնական այն նախանձից** թարգմանությամբ, որտեղ կիրառվել է *հականշային թարգմանություն*:

6. Վրեժխնդրություն տարբերակիչ բաղադրիչներով խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի «**envy**» իմաստային դաշտի *մոտակա*

եզրի միավորները, օրինակ՝ **malice, grudge** բառերը, և հայերեն նշված միավորները թարգմանվել են **ոխ, վրեժխնդրություն, չարականություն, քինախնդրություն** բառերով: Վերջիններս ևս ընդգրկված են հայերենի «նախանձ» իմաստային դաշտի մոտակա եզրում:

Օրինակ՝

It was the lad who had peached upon him about the grocer's cart; but he bore little malice, not at least towards the young and small (W.Thackeray «Vanity Fair», p.31).

Դա այն փոքրիկ տղան էր, որը չարախոսել էր իր մասին բեռնակառքի առնչությամբ: Բայց **Դոբբինի սրտում չարականություն գրեթե չկար, հարկապես փոքրերի ու թույլերի նկատմամբ (Վ. Թեքերեյ, Ունայնության տոնավաճառ, թարգմ.' Ս. Ալեմյան, էջ 47):**

...but he bore little malice հատվածը թարգմանելով բայց **Դոբբինի սրտում չարականություն գրեթե չկար** նախադասությամբ՝ թարգմանիչն օգտագործել է թարգմանական տարբեր հնարներ: Կիրառվել է նաև նկարագրական թարգմանություն՝ **to bear little malice** դարձվածքի համար առաջարկելով **սրտում չարականություն գրեթե չկար** թարգմանությունը: Բացի այդ՝ թարգմանիչը գործածել է *հավելման* և *հարմարեցման* հնարները՝ ավելացնելով **սրտում** գոյականը: Այս բառի ավելացումը կարևոր է հայ ընթերցողի համար և տիպիկ է հայ լեզվամտածողությանը, քանի որ, ինչպես նշել ենք, հայերենի լեզվակիրը բոլոր զգացմունքները իր սրտում է պահում:

7. Ցանկություն տարբերակիչ բաղադրիչով խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի «**envy**» իմաստային դաշտի մոտակա եզրի միավորները, այն է՝ **desire, yearn, pine**: Վերջիններս հայերեն թարգմանվել են **տենչանք, բերկրալի՝ նախանձելի ցանկություն** բառերով, որոնք ընդգրկված են հայերենի «նախանձ» իմաստային դաշտի *հեռավոր* եզրում: Այս իմաստային բաղադրիչը պարունակող օրինակներ հանդիպում են մեր ուսումնասիրության մեջ ընդգրկված բոլոր վեպերի թե՛ *համատեքստային* և թե՛ *բառային* շերտերում:

Օրինակ՝

He pined to be where he didn't belong... among the English upper classes. And how they enjoyed the various kicks they got at him! And how he hated them! (D.H. Lawrence «Lady Chatterley's Lover», p. 16).

Տենչում էր այնտեղ լինել, որն իր տեղը չէր... անգլիական բարձր հասարակությունում: Եվ ինչպես էին նրանք հաճույք ստանում՝ այս ու այն կողմից քարկոծելով նրան: **Իսկ նա ինչպե՞ս էր ապրում նրանց** (Դ. Հ. Լորենս, Լեդի Չաթերլիի սիրեկանը, թարգմ.' Ա. Արսենյան, էջ 53):

Հարկ է նշել, որ **to pine** բայը անգլերենի «**envy**» իմաստային դաշտի *հեռավոր* եզրի միավոր է և թարգմանվել է հայերենի **տենչալ** բայով, որը նույնպես հայերենի «նախանձ» իմաստային դաշտի *հեռավոր* եզրի միավոր է: Հետևաբար, առկա է տվյալ դաշտերի միավորների ամբողջական համընկնում: Իսկ **And how he hated them** հատվածը թարգմանվել է *բացարձակ*

համարժեքով՝ **իսկ նա ինչպե՛ս էր առում նրանց** նախադասությամբ:

Այսպիսով, «*envy*» (*նախանձ*) իմաստային դաշտի առկայացումը անգլերեն բնագրում և դրա համեմատական վերլուծությունը հայերեն թարգմանություններում բացահայտում են իմաստային դաշտում ընդգրկված միավորների ոչ միայն համապատասխանություններ, այլ նաև ոչ համարժեք իրացումներ: Հետևաբար, նշված իմաստային դաշտի միավորները բնագրից թարգմանելիս կիրառվել են մի շարք թարգմանական փոխակերպումներ, որոնց զգալի մասը կատարվել է բնագիր տեքստը հայ ընթերցողի լեզվամտածողությանը առավելագույնս մոտեցնելու նպատակով, որը հաճախ հանգեցրել է անգլիական և ամերիկյան լեզվամտածողության և լեզվամշակութային արժեքների որոշակի խաթարման: Սակայն, ընդհանուր առմամբ, բնագրի և թարգմանության համարժեքությունը պահպանվել է:

ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կատարված համեմատական վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել՝

1. Հայերենում *նախանձ* և *խանդ* բառերը ծագել են նույն արմատից (*նախանձ/խանդ*), հետևաբար իմաստային սերտ կապ են ունեցել, որը հնարավորություն է տվել դրանք զուգահեռաբար գործածելու: Անգլերենում *envy* և *jealousy* բառերը սկզբնապես իմաստային կապ չեն ունեցել և միայն հետագայում են ներկայացել որպես իմաստային զուգահեռներ:

2. Հայերենի «*նախանձ*» և անգլերենի «*envy*» իմաստային դաշտերի սեռային իմակները տարբեր են, և դա հանգեցրել է երկու լեզուների իմաստային դաշտերում ընդգրկված անդամների իմաստային անհամապատասխանությունների: Ընդ որում, հայերենի «*նախանձ*» իմաստային դաշտի կենտրոնում *ուրիշի առավելությունները տեսնելիս* չարության, *նաև բարի նախանձի զգացում* սեռային իմակն է, իսկ անգլերենում՝ *ուրիշի առավելության գիտակցման հեղինակն* չարության զգացում և միաժամանակ *այդ առավելությունները ունենալու ցանկություն* սեռային իմակը:

3. Հայերենում բազմաթիվ են նույն կառուցվածքային կաղապարով կազմված բառային միավորները՝ բարդ և բարդաձանցավոր բառերը, մինչդեռ անգլերենում գերակշռում են պարզ միավորները: Հարկ է նշել, որ թե՛ հայերենում և թե՛ անգլերենում մեծաթիվ են միավորների հնացած և բարբառային տարբերակները: Թե՛ հայերենում և թե՛ անգլերենում «*նախանձ*» և «*envy*» իմաստային դաշտերի որոշ միավորներ իրենց տարբեր իմաստներով կարող են միևնույն ժամանակ անդամակցել և՛ *մոտակա* և՛ *հեռավոր* եզրերին:

4. Հայերեն «*նախանձ*» և անգլերեն «*envy*» իմաստային դաշտերի
- *կենտրոնական* եզրերի *տարբերակիչ իմակները* նույնական են, այն է՝ *չարության, նախանձի զգացում ուրիշի առավելությունները տեսնելիս*:
 - Հայերենի «*նախանձ*» իմաստային դաշտի *մոտակա* եզրում բացակայում է անգլերենի «*envy*» (*նախանձ*) իմաստային դաշտի *մոտակա եզրում* առկա *նախանձոր ցանկություն՝ ունենալու ուրիշի առավելություններից*

տարբերակիչ իմաստային բաղադրիչ պարունակող միավորների խումբը, որն արտահայտում է բացասական իմաստ: Հայերենում չեն հանդիպել նաև *ոխի*, *վրեժխնդրության*, *արելության*, *թշնամության* զգացում ունենալու, *մրցակցության* տարբերակիչ իմաստային բաղադրիչներ պարունակող խմբեր, որոնք առկա են անգլերենի «envy» (*նախանձ*) իմաստային դաշտում: Հայերենում տվյալ եզրում տարանջատված են *նախանձը որպես հարկանիշ* և *նախանձը որպես վարքագիծ*, ինչպես նաև *ստորանախանձ*, *գեղնանախանձ* իմաստային բաղադրիչ պարունակող միավորների իմակները, որոնք բացակայում են անգլերենում:

- Հայերենի «*նախանձ*» իմաստային դաշտի *հեռավոր եզրը* ընդգրկել է *մեծ եռանդով*, *կրքով մի բանին հեղամուր* լինելու տարբերակիչ իմաստային բաղադրիչ պարունակող միավորների խումբը, այսպես կոչված *բարի նախանձը*, որը չի հանդիպել անգլերենում, թեպետ անգլերենում *մրցակցություն* տարբերակիչ իմաստային բաղադրիչ պարունակող միավորների խումբը մոտ է հայերենի *բարի նախանձ* տարբերակիչ իմաստային բաղադրիչ պարունակող միավորների խմբին, սակայն այն դրսևորման ավելի շատ բացասական ձև է, քան դրական: Անգլերենում առկա է *ազահոություն* տարբերակիչ իմաստային խումբը, սակայն հայերենում նման իմաստային խումբ չի հանդիպել:

5. «*Նախանձ*» իմաստն արտահայտող հայերեն և անգլերեն դարձվածային միավորների ձևավորած զուգորդային դաշտերի վերլուծությունը փաստում է, որ զուգարդվող լեզվամշակույթներում առկա են ոչ միայն տարբերություններ, այլ նաև ընդհանրություններ: Հատկանշական է, որ անգլերենում «*նախանձ*» իմաստ արտահայտող դարձվածային միավորներն ավելի մեծաթիվ են, քան հայերենում: Ընդ որում, առավել շատ են հատկապես բացասական հարանշանակային իմաստ ունեցող միավորները: Հայերենում դարձվածային միավորների մեծ մասը հիմնված է ընդհանուր պատկերների վրա, որոնք կառուցված են երեք կազմախոսական բաղադրիչներով՝ *աչք*, *փոր*, *սիրտ*: Անգլերենում դարձվածային միավորների մի մասը կրկին հիմնված է *աչք* պատկերի վրա, մյուսները խմբավորվել են ըստ ընդհանուր իմաստային բաղադրիչի, քանի որ չունեն ընդհանուր պատկերներ:

6. Թե՛ հայերենում, թե՛ անգլերենում գոյություն ունեն *նախանձ-չարակամություն* և *նախանձ-վրեժխնդրություն* զուգորդային դաշտերը ձևավորող դարձվածային միավորներ, որոնք առկայանում են *չար աչքի* սնահավատ պատկերացմամբ: Հայերենում *վրեժխնդրություն* և *ցանկություն* իմաստային բաղադրիչ պարունակող դարձվածքներում և ասացվածքներում առկա են *օձ*, *գայթա*, *զուռնա* բաղադրիչները՝ որպես հայ մշակույթում ընդունված խորհրդանիշներ, իսկ անգլերենում տվյալ խմբերում ընդգրկված միավորները չունեն խորհրդանշանային հենք:

Հայերենում *նախանձ-ցավ* զուգորդային դաշտը ձևավորող դարձվածային միավորները *նախանձ* իմաստից բացի, արտահայտում են նաև *խանդ* իմաստը, որը կարելի է բացատրել հայերենում *նախանձ* և *խանդ* բառերի արմատների ծագումնաբանական ընդհանրությամբ: Սակայն միայն անգլերեն դարձվածային

միավորներում է առանձնացվել «նախանձ-շողորոթություն» զուգորդային դաշտը ձևավորող խումբը:

7. Անգլերեն գեղարվեստական գրականության բնագրերից քաղված «նախանձ» իմաստն արտահայտող օրինակների և դրանց հայերեն թարգմանությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ կան իմաստային դաշտի միավորների մի շարք ոչ համարժեք իրացումներ, որոնք մեծապես պայմանավորված են տվյալ լեզուների քերականական, բառային, ոճական, ինչպես նաև գործարանական առանձնահատկություններով: «Նախանձ» իմաստային դաշտի միավորների թարգմանության համարժեքությունը առավել առկայացված է այն դեպքում, երբ մշակութային և մտածական կադապարները և ներլեզվական գործոնները համընկնում են: Ուստի բնագիր տեքստի և թարգմանության համարժեքությունը պահպանելու նպատակով կիրառվել են թարգմանական մի շարք փոխակերպումներ, հատկապես բազմաթիվ են *փոխհարուցում*, *կրճատում*, *հավելում*, *հարմարեցում* հնարների դիմելու դեպքերը, ինչպես նաև կատարվել է *համարեքստային նկարագրական* թարգմանություն, որոնց միջոցով բնադիր տեքստն առավելագույնս մոտեցվել է հայ ընթերցողի լեզվամտածողությանը: Թարգմանիչները հաճախ ներկայացրել են նաև աշխարհընկալման իրենց անհատական դիտարկումները, որոնց արդյունքում երբեմն առաջացել է գործարանական անհամարժեքություն:

8. Անգլերենի «envy» (*նախանձ*) իմաստային դաշտը հայերեն թարգմանություններում առկայացել է հիմնականում *կենսորոնական* և *մոտրակա* եզրերի անդամների միջոցով (անգլերենում՝ *jealousy, malice, hate*, հայերենում՝ *խանդ, նախանձ, ոխ*), որոնք *նախանձ* և *envy* բառերի հոմանիշներն են: Սակայն երբեմն անգլերենի «envy» (*նախանձ*) իմաստային դաշտի անդամները թարգմանվել են վերջինիս համապատասխան իմաստային դաշտի *հեռավոր* եզրի անդամների միջոցով, որը վկայում է երկու լեզուների իմաստային և հոմանշային շերտերի տարբերությունը: Բացի այդ՝ «envy» (*նախանձ*) իմաստային դաշտն առկայանում է ոչ միայն վերջինիս անդամների միջոցով, այլ նաև ոճական բազմազան հնարների և համատեքստային շերտի առկայացմամբ. «envy» իմաստային դաշտի միավորների և համատեքստային շերտը առկայացել են **չարականություն, ատելություն, զայրույթ, խանդ, վրեժխնդրություն, թշնամություն (մրցակցություն), ցանկություն** իմաստներով:

9. 19-20 դարերի անգլալեզու գեղարվեստական ստեղծագործությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ *նախանձի թշնամություն* իմաստային խումբն առկայացել է միայն **Ու.Թեքերեյի «Ունայնության տոնավաճառ»** վեպում: Դա կարելի է բացատրել նրանով, որ 19-րդ դարի անգլիական իրականությանը բնորոշ էր *նախանձից* ծնված *թշնամությունը*, որի հիմքը ուրիշի առավելությունները, հատկապես հարստությունն ունենալու տենչն էր: Իսկ **Ջ.Լոնդոնի «Մեծ փան փոքրիկ փրոուսին»** վեպում *նախանձ* իմաստը հիմնականում առկայացել է համատեքստային շերտում և հատկապես բազմաթիվ են *խանդ* իմաստն արտահայտող օրինակները՝ պայմանավորված վեպի հիմքում ընկած սիրային եռանկյունու գոյությամբ: **Դ.Լորենսի «Լեդի**

Չաթըրիի սիրեկանը» վեպում նկատելի է *նախանձ* իմաստի գերակշռող առկայացումը՝ *զայրույթ*, *վրդովմունք* իմաստային բաղադրիչներով, որը պայմանավորված է այդ դարաշրջանի հանրության համար հատկապես անընդունելի՝ ցածր դասի տղամարդու և բարձր դասի ամուսնացած կնոջ սիրային պատմությունը նկարագրող դիպաշարով:

Ամփոփելով կարող ենք նշել, որ թեև *նախանձը* համընդհանուր զգացում է, որի լեզվական դրսևորումներն առկա են մեր ուսումնասիրության առարկա երկու լեզուների բառամթերքում, այդուհանդերձ հայերենի և անգլերենի «*նախանձ/envy*» իմաստային դաշտերը և այդ դաշտերում ընդգրկված միավորները ցուցաբերում են ոչ միայն ընդհանրություններ, այլ նաև որոշակի տարբերություններ, որոնք առավելապես նկատելի են գրական երկերում և դրանց թարգմանություններում: Այս տարբերությունները ոչ միայն լեզվական օրինաչափությունների, այլ նաև լեզվակիրների ազգային, մշակութային յուրահատկությունների դրսևորումներ են:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են

1. Linguocultural Concept «Jealousy» in Jack London's Novel «The Little Lady of the Big House», Վ.Բոյունովի անվան ԵՊԼՀ Բանբեր, 1(28), Ե., 2013, էջ 79-85:
2. Языковая репрезентация концепта «ревность» в английских и армянских паремиях и афоризмах, «Միջմշակութային և միջլեզվական հաղորդակցության արդի հիմնախնդիրները», ԵՊԼՀ «Լեզուն մշակույթի միջոցով» 3-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2014, էջ 137-148:
3. Հայերենի «նախանձ» և «envy» գոյականների բառիմաստային խմբերի համեմատական վերլուծությունը, Վ.Բոյունովի անվան ԵՊԼՀ Բանբեր 1(34), Ե., 2015, էջ 183-197:
4. Лингвокультурные особенности лексико-семантического поля «envy» в английском и армянском языках, «Этнология:традиции и современность», Международная научная конференция, Минск, 2016, Стр. 156- 162:
5. «Նախանձ» իմաստային դաշտի թարգմանական առանձնահատկությունները Ու.Թեքերեյի «Ունայնության տոնավաճառ» վեպի բնագրում և հայերեն թարգմանության մեջ, Վ.Բոյունովի անվան ԵՊԼՀ Բանբեր 1(38), Ե., 2016, էջ 290-299:
6. «Նախանձ» իմաստ արտահայտող դարձվածային միավորների համեմատական վերլուծությունը հայերենում և անգլերենում, Վ.Բոյունովի անվան ԵՊԼՀ Բանբեր 1(40), Ե., 2017, էջ 317-329:
7. Пословицы выражающие значение «зависть/envy» в армянском и английском языках, Վ.Բոյունովի անվան ԵՊԼՀ Բանբեր 1(40), Ե., 2017, էջ 324-329:

НАЗЕЛИ РОБЕРТОВНА АКОПЯН

СЕМАНТИЧЕСКОЕ ПОЛЕ «ЗАВИСТЬ» В АРМЯНСКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ И ПЕРЕВОДЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЕДИНИЦ ДАННОГО ПОЛЯ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02-«Общее и сравнительное языкознание»
Защита состоится 5 марта 2018 в 15.00 часов на заседании
Специализированного совета по Лингвистике 019 ВАК при Институте языка им.
Г. Ачаряна Национальной академии наук РА (адрес: 0015, Ереван, ул. Гр.
Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена сравнительно - сопоставительному анализу семантического поля «**зависть**» в армянском и английском языках, выделению их общих и различительных особенностей, а также исследованию проблемы эквивалентности перевода единиц данного семантического поля в художественных текстах.

Актуальность исследования определяется интересом к развитию новых подходов к теории семантического поля, а также к методам исследований в сфере переводоведения.

Целью работы является проведение сравнительно- сопоставительного анализа языковых единиц семантического поля «**зависть**» в армянском и английском языках, разъяснение общих и различительных особенностей данных полей, а также выявление средств актуализации данных единиц в художественных текстах и определение степени передачи эквивалентности в переводах.

Научная новизна исследования заключается в том, что впервые предпринимается попытка сопоставительного анализа семантического поля «**зависть**» в армянском и английском языках и выявляются средства актуализации единиц данного семантического поля в художественных текстах на уровне эквивалентности.

Структура работы. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений.

Во введении обосновывается актуальность темы, отмечается новизна исследования, представляются основные цели и задачи работы, излагаются принципы и методы исследования.

Первая глава «Понятие «семантическое поле» в парадигме переводческой эквивалентности» посвящена изучению различных подходов к понятию «*семантическое поле*», а также к проблеме эквивалентности в художественном переводе.

Вторая глава «Сопоставительный анализ семантического поля «зависть» в английском и армянском языках» посвящена сравнительному

анализу языковых единиц, ассоциативных полей фразеологических единиц, входящих в данное семантическое поле.

Третья глава «Актуализация семантического поля «зависть» в английской художественной прозе и эквивалентность единиц данного поля в армянских переводах» представляет примеры, содержащие языковые единицы, выражающие значение «зависть» из английской художественной литературы и сравнительный анализ данных единиц в соответствующих армянских переводах.

В **заключении** представлены результаты проведённого исследования.

NAZELI ROBERT HAKOBYAN

**THE SEMANTIC FIELD «ENVY» IN THE ARMENIAN AND ENGLISH LANGUAGES
AND TRANSLATION PECULIARITIES OF ITS UNITS**

Dissertation for the Candidate's Degree of Philological Sciences,
Specialty 10.02.02-«General and Comparative Linguistics»

The defense will be held on March 5 at 15.00 at the session of the HAC Academic Council on Linguistics 019 in the Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences RA
(address: 0015, Yerevan, Gr. Lusavorich St., 15).

SUMMARY

The dissertation is devoted to the comparative analysis of the semantic field «**envy**» in the Armenian and English languages, identification of their common and distinctive features, as well as to the study of the equivalence of the translation of the units of the given semantic field in artistic texts.

The relevance of the research is conditioned by the interest in the development of the new approaches to the theory of the semantic field, as well as to the methods of investigation in the field of translation studies.

The research **aims** to comparatively analyze the linguistic units of the semantic field «**envy**» in the Armenian and English languages, to identify common and distinctive features of these fields, as well as to define the means of actualization of these units in artistic texts and to determine the degree of equivalence in translation.

The **scientific novelty** of the research is determined by the fact that for the first time a comparative analysis of the semantic field «**envy**» in the Armenian and English languages is performed and means of actualization of the lexical and phraseological units expressing the meaning of «**envy**» in the artistic texts at the level of equivalence are identified.

The structure of the work. The dissertation consists of introduction, three chapters, conclusion, the list of literature and appendices.

The Introduction defines the subject and the main objectives of the research. It presents the novelty, the theoretical and practical value, as well as the structure of the research.

The first chapter «The notion of «*semantic field*» in the paradigm of translation equivalence» is devoted to the study of different approaches to the notion of «*semantic field*», as well as to the problem of equivalence in artistic translation.

The second chapter «The comparative analysis of the semantic field «*envy*» in the English and Armenian languages» is devoted to the comparative

analysis of the linguistic units, the associative fields of the phraseological units membering the semantic field «**envy**» in the Armenian and English languages.

The third chapter «The actualization of the semantic field «envy» in English prose and equivalence of the field units in Armenian translations» presents examples from English fiction containing linguistic units that express the meaning of «**envy**» and comparatively analyzes these units in the corresponding Armenian translations.

In **Conclusion** the main findings and some inferences drawn from the research are summarized.